



# ՀԵՌՌԻՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2021 թվականի թիվ 187-Ս

ք. Երևան

### «ԱԼՖԱ ՏԵԼԵՎՈՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հոկտեմբերի 14-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 60 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ԱԼՖԱ ՏԵԼԵՎՈՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից «Հ2», «Հ1 լրատվական ալիք», «Արմնյուզ», «Նուռ», «Ազատություն TV», «Նոր Հայաստան», «Դար 21», «5-րդ ալիք», «Ցայգ TV», «Ֆորտունա TV», «Первый канал», «CNN», «Рен ТВ», «Домашний», «СТС», «Время», «Fashion TV», «Թավա TV», «Телекафе», «Հայ TV», «History», «Da Vinci», «Viasat History», «Viasat Explore», «Viasat Nature HD», «Бобер», «Авто 24», «Карусель», «Cartoon network», «Мульт», «Jimjam», «Խաղալիք TV», «Музыка Первого», «Ru TV», «Film box Art House», «Filmbox», «Кинохит», «Кинопреьера», «Дом Кино», «Киносемья», «Չիլոման», «Наше новое кино», «Ֆիլմզոն», «Индийское кино», «TV 1000», «Кинокомедия», «Бокс ТВ», «Extreme sport», «Мир», «СТС love», «Киносвидание», «Родное кино», «Киномикс», «Block», «Ля минор», «Киносерия», «Дом кино премиум», «Мужское кино», «Автоплюс», «Ностальгия», «Ocean TV», «RTG TV», «Boomerang TV», «Bloomberg», «8 канал», «France 24», «Si-fi», «Матч премьер», «Euronews», «Мульт и музыка», «ТНТ music», «Дикий», «Радость моя», «Al jazzera», «Fightbox HD», «HDL», «Armenia News 24», «Բազմոց TV», «Ֆիթնես TV», «Սուզոն TV», «Docu Box HD», «Тайны галактики», «Hibrid EDU» տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու Օրենքի պահանջի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 47-Ս հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 14-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը՝ 14:30-ից մինչև ժամը՝ 15:15-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են թվով 93 տեսալսողական ծրագրեր, որոնց թվում նաև «Հ2», «Հ1 լրատվական ալիք», «Արմնյուզ», «Նուռ», «Ազատություն TV», «Նոր Հայաստան», «Դար 21», «5-րդ ալիք», «Ցայգ TV», «Ֆորտունա TV», «Первый канал», «CNN», «Рен ТВ», «Домашний», «СТС», «Время», «Fashion TV», «Թավա TV», «Телекафе», «Հայ TV», «History», «Da Vinci», «Viasat History», «Viasat Explore», «Viasat Nature HD», «Бобер», «Авто 24», «Карусель», «Cartoon network», «Мульт», «Jimjam», «Խաղալիք TV», «Музыка Первого», «Ru TV», «Film box Art House», «Filmbox», «Кинохит», «Кинопреьера», «Дом Кино», «Киносемья», «Չինուման», «Наше новое кино», «Ֆիլմզոն», «Индийское кино», «TV 1000», «Кинокомедия», «Бокс ТВ», «Extreme sport», «Мир», «СТС love», «Киносвидание», «Родное кино», «Киномикс», «Block», «Ля минор», «Киносерия», «Дом кино премиум», «Мужское кино», «Автоплюс», «Ностальгия», «Ocean TV», «RTG TV», «Boomerang TV», «Bloomberg», «8 канал», «France 24», «Si-fi», «Матч премьер», «Euronews», «Мульт и музыка», «ТНТ music», «Дикий», «Радость моя», «Al jazzera», «Fightbox HD», «HDL», «Armenia News 24», «Բազմոց TV», «Ֆիթնես TV», «Սուզոն TV», «Docu Box HD», «Тайны галактики», «Hibrid EDU» տեսալսողական ծրագրերը:

Արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 17-ին գրությամբ Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկի համադրության արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի վերահաղորդվում են «Հ2», «Հ1 լրատվական ալիք», «Արմնյուզ», «Նուռ», «Ազատություն TV», «Նոր Հայաստան», «Դար 21», «5-րդ ալիք», «Ցայգ TV», «Ֆորտունա TV», «Первый канал», «CNN», «Рен ТВ», «Домашний», «СТС», «Время», «Fashion TV», «Թավա TV», «Телекафе», «Հայ TV», «History», «Da Vinci», «Viasat History», «Viasat Explore», «Viasat Nature HD», «Бобер», «Авто 24», «Карусель», «Cartoon network», «Мульт», «Jimjam», «Խաղալիք TV», «Музыка Первого», «Ru TV», «Film box Art House», «Filmbox», «Кинохит», «Кинопреьера», «Дом Кино», «Киносемья», «Չինուման», «Наше новое кино», «Ֆիլմզոն», «Индийское кино», «TV 1000», «Кинокомедия», «Бокс ТВ», «Extreme sport», «Мир», «СТС love», «Киносвидание», «Родное кино», «Киномикс», «Block», «Ля минор», «Киносерия», «Дом кино премиум», «Мужское кино», «Автоплюс», «Ностальгия», «Ocean TV», «RTG TV», «Boomerang TV», «Bloomberg», «8 канал», «France 24», «Si-fi», «Матч премьер», «Euronews», «Мульт и музыка», «ТНТ music», «Дикий», «Радость моя», «Al jazzera», «Fightbox HD», «HDL», «Armenia News 24», «Բազմոց TV», «Ֆիթնես TV», «Սուզոն TV», «Docu Box HD», «Тайны галактики», «Hibrid EDU» տեսալսողական ծրագրերը, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկից:

Հանձնաժողովը դեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի

հոկտեմբերի 14-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 14-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հոկտեմբերի 18-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը որևէ պարզաբանում և բացատրություն Հանձնաժողով չի ներկայացրել:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի՝ Հանձնաժողովն՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են .

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմին:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը և առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացված ապացույցներով, ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ ղեկավարվելով՝ Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ Հանձնաժողովը 2021 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 04-795 գրությամբ Հայաստանի Հանրապետությունում ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող բոլոր ընկերություններին, այդ թվում «ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերությանն առաջարկել է ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ամբողջական ցանկը թղթային և էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Հանձնաժողով: Ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 17-ին գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերը:

Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և դիտարկման արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 14-ին կազմված արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերի համադրության արդյունքում արձանագրել է, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի վերահաղորդվում են մի շարք տեսալսողական ծրագրեր, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերից:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին, ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկին և հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորն իր գործունեությունն իրականացնում է՝ խախտելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը

վերահաղորդել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները

խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Վարչական վարույթի շրջանակներում ցանցային օպերատորի կողմից խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ որևէ պարզաբանում և բացատրություն չներկայացնելը ևս փաստում է այն մասին, որ ցանցային օպերատորն առանց պայմանագրերի վերահաղորդում է իրականացնում:

Հաշվի առնելով այն փաստը, որ տեղում դիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «Հ2», «Հ1 լրատվական ալիք», «Արմնյուզ», «Նուռ», «Ազատություն TV», «Նոր Հայաստան», «Դար 21», «5-րդ ալիք», «Ցայգ TV», «Ֆորտունա TV», «Первый канал», «CNN», «Рен ТВ», «Домашний», «СТС», «Время», «Fashion TV», «Թավա TV», «Телекафе», «Հայ TV», «History», «Da Vinci», «Viasat History», «Viasat Explore», «Viasat Nature HD», «Бобер», «Авто 24», «Карусель», «Cartoon network», «Мульт», «Jimjam», «Խաղալիք TV», «Музыка Первого», «Ru TV», «Film box Art House», «Filmbox», «Кинохит», «Кинопреьера», «Дом Кино», «Киносемья», «Շինման», «Наше новое кино», «Ֆիլմզոն», «Индийское кино», «TV 1000», «Кинокомедия», «Бокс ТВ», «Extreme sport», «Мир», «СТС love», «Киносвидание», «Родное кино», «Киномикс», «Block», «Ля минор», «Киносерия», «Дом кино премиум», «Мужское кино», «Автоплюс», «Ностальгия», «Ocean TV», «RTG TV», «Boomerang TV», «Bloomberg», «8 канал», «France 24», «Si-fi», «Матч премьер», «Euronews», «Мульт и музыка», «ТНТ music», «Дикий», «Радость моя», «Al jazzera», «Fightbox HD», «HDL», «Armenia News 24», «Բազմոց TV», «Ֆիթնես TV», «Մուզոն TV», «Docu Vox HD», «Тайны галактики», «Hibrid EDU» տեսալսողական ծրագրերը, իսկ ցանցային օպերատորի կողմից նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդումն իրականացվում է առանց պայմանագրերի, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ խախտվել է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, ցանցային օպերատորի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության

պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմինն գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 49-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՍ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱԼՖԱ ՏԵԼԵԿՈՍ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

16 նոյեմբերի 2021թ.

ք. Երևան